

Ը.00.06 - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության ուսումնասիրության շրջանակներում իրականացվում է համաշխարհային տնտեսության արդի հիմնախնդիրների, տնտեսական հարաբերությունների միջազգայնացման և գլոբալացման օրինաչափությունների ուսումնասիրություն, դրանց կարգավորման մեխանիզմների՝ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

Տվյալ մասնագիտացման օբյեկտներն են արտադրության, առևտրի, արժույթաֆինանսական, միգրացիոն, գիտա-տեխնիկական և համաշխարհային տնտեսական գործընթացները, իսկ գործընթացների սուբյեկտներ են՝ աշխարհի երկրների տնտեսությունները, վերազգային կորպորացիաները, միջազգային տնտեսական և ֆինանսական կազմակերպությունները, որոնք ապահովում են համաշխարհային տնտեսության՝ որպես ամբողջական համակարգի գործունեությունը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Բաժին 1. Միջազգային տնտեսական հարաբերություններ

Թեմա 1. Միջազգային տնտեսագիտության առարկան և խնդիրները

Միջազգային տնտեսական հարաբերությունների (ՄՀ) ձևավորման պատմական նախադրյալները: Միջազգային տնտեսագիտության ուսումնասիրության առարկան: Տնտեսագիտության տեսությունը որպես միջազգային տնտեսագիտություն ուսումնասիրության մեթոդաբանական հիմք: Միջազգային տնտեսագիտության տեղը տնտեսական գիտությունների համակարգում: Միջազգային տնտեսագիտության խնդիրները:

Թեմա 2. Աշխատանքի միջազգային բաժանումը

Աշխատանքի միջազգային բաժանման եռությունը և օբյեկտիվ բնույթը: Աշխատանքի միջազգային բաժանման նախադրյալները: Աշխատանքի միջազգային բաժանման փուլերը: Աշխատանքի միջազգային բաժանման դրսևորման ձևերը: Արտադրության միջազգային մասնագիտացման և կոոպերացման եռությունը, դրանց ձևերը և զարգացման ուղղությունները: Արտադրության միջազգային մասնագիտացման և ազգային տնտեսությունների զարգացման հիմնախնդիրները: Միջազգային արտադրական կոոպերացումը և կոոպերատիվ կապերի կարգավորման մեթոդները: Համատեղ ձեռնարկությունները որպես միջազգային կոոպերացման յուրահատուկ ձև:

ԳՏԱ և աշխատանքի միջազգային բաժանման խորացումը: Տնտեսական կյանքի միջազգայնացումը: Աշխատանքի միջազգային բաժանման արդյունավետությունը և դրա մակարդակը բնութագրող հիմնական քանակական և որակական ցուցանիշները:

Աշխատանքի միջազգային բաժանման հիմնական միտումները ժամանակակից պայմաններում:

Աշխատանքի միջազգային բաժանման արդիականացման տեսությունները:

ՀՀ մասնակցությունը աշխատանքի միջազգային բաժանմանը:

Թեմա 3. Համաշխարհային տնտեսության Էուրոյունը, կառուցվածքը և զարգացման օրինաչափությունները

Համաշխարհային տնտեսության ծագման պատմական նախադրյալները: «Համաշխարհային տնտեսություն» հասկացությունը: Համաշխարհային տնտեսության անցած փուլերը մինչև իր վերջնական ձևավորումը և վերջնական ձևավորումից հետո: Համաշխարհային և ազգային տնտեսությունների միջև փոխհարաբերությունների ձևավորումը: Համաշխարհային արտադրության կառուցվածքը: Համաշխարհային արտադրության զարգացման և տեղաբաշխման միտումները: Համաշխարհային տնտեսության մեջ տեղաշարժերը XX դարի 2–րդ կեսի և XXI-րդ դարի սկզբին:

Արտադրության և փոխանակության ոլորտների միջազգայնացումը: Ժամանակակից համաշխարհային տնտեսությունը և շուկայական հարաբերությունները: Աշխարհատնտեսական կապերի նոր ձևերի կիրառումը:

Աշխարհի երկրների դասակարգումը ըստ Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) մեթոդաբանության: Համաշխարհային տնտեսության մեջ՝ երկրի մասնակցությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները:

Համաշխարհային տնտեսության կառուցվածքը: Աշխարհի երկրների տարբերակման (դասակարգման) հիմքում դրված հատկանիշները և ցուցանիշները: Արդյունաբերապես զարգացած երկրները: «Մեծ յոթյակի» առաջատար դերը համաշխարհային տնտեսության մեջ: Նոր արդյունաբերական և զարգացող երկրները: Սոցիալ-տնտեսական վերափոխումները նախկին սոցիալիստական երկրներում:

Համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական օրինաչափությունները: Երկրների տնտեսական զարգացման մակարդակների հավասարեցման միտումը: Բաց տնտեսության կազմավորումը որպես համաշխարհային տնտեսության զարգացման օբյեկտիվ հիմք: Արտաքին գործոնների ազդեցության ուժեղացումը ազգային տնտեսությունների զարգացման վրա:

Թեմա 4. Միջազգային առևտրի տեսությունները

Մերկանտիլիզմը որպես արտաքին առևտրի հետ կապված հարցերի լուսաբանման առաջին փորձ: Ադամ Սմիթի բացարձակ առավելությունների տեսությունը: Դավիթ Ռիկարդոյի համեմատական առավելությունների տեսությունը: Ազատ առևտրի սկզբունքը: Ջոն Ստյուարտ Միլի տեսակետը միջազգային առևտրի մասին:

Համեմատական առավելությունների տեսության զարգացումը Հեքտեր-Օիլինի կողմից: Լեոնտևի պարադոքսը: Հեքտեր-Օիլինի տեսության օգտագործումը ժամանակակից պայմաններում: Համեմատական առավելության տեսության զարգացումը Պ.Սամուելսոնի կողմից:

Միջազգային առևտրի երկրնտրանքային (ալտերնատիվ) տեսությունները: Մ.Պոզների տեխնոլոգիական խզման տեսությունը: Արտադրանքի կենսապարբերաշրջանի տեսությունը: Պ. Կրուզմանի մասշտաբի էֆեկտի (արդյունքի) տեսությունը: Մ.Պորտերի «մրցակցային առավելությունների» տեսությունը: Պահանջարկի տեսությունները:

Արտաքին առևտրի ստանդարտ մոդել:

Թեմա 5. Միջազգային առևտրի ելությունը, կառուցվածքը և զարգացման միտումները

Միջազգային առևտուրը ՄՏՀ-ի համակարգում: Արտաքին առևտրի անհրաժեշտությունը: Արտահանում և ներմուծում: «Արտաքին առևտրի ապրանքաշրջանառություն» և «առևտրային հաշվեկշիռ» հասկացությունները:

Միջազգային առևտրի ծագման և զարգացման հիմնական նախադրյալները: Միջազգային առևտրի դինամիկան և դրա վրա ազդող գործոնները:

Համաշխարհային առևտրում երկրների մասնակցության մակարդակը բնութագրող ցուցանիշները: Արտահանման և ներմուծման արժեքային բազան: Համաշխարհային գներ:

Երկրների առանձին խմբերի և առանձին զարգացած երկրների արտաքին առևտրի աճի միտումները: Միջազգային առևտրում երկրների մասնակցությունը: Գրավիտացիոն մոդելի կիրառումը երկրների միջև առևտրային հոսքերը գնահատելու համար: Ապրանքների դասակարգումը միջազգային առևտրում: Համաշխարհային առևտրի աշխարհագրական, ճյուղային և ապրանքային կառուցվածքը:

Վառելիքահումքային և գյուղատնտեսական ապրանքները համաշխարհային առևտրում: Վառելիքաէներգետիկայի և սննդամթերքի առևտրի կազմակերպման առանձնահատկությունները: Արդյունաբերության և նրա ճյուղերի ու ենթաճյուղերի ապրանքների միջազգային առևտուր: Չարգացած և զարգացող երկրների (այդ թվում՝ նոր արդյունաբերական երկրների) տեղը համաշխարհային առևտրում:

Թեմա 6. Համաշխարհային շուկան և դրա կոնյունկտուրան: Գնագոյացումը միջազգային առևտրում:

Համաշխարհային շուկայի կառուցվածքը: Ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի համաշխարհային շուկաներ, դրանց փոխհարաբերակցությունը ու փոխգործակցությունը:

Համաշխարհային շուկայի կոնյունկտուրայի հասկացությունը: Կոնյունկտուրան կազմող հիմնական գործոնները:

Ապրանքային բորսաները և համաշխարհային առևտուրը: Առևտրատնտեսական դաշինքների տեղը համաշխարհային առևտրում: Ժամանակակից միջազգային առևտրի հակասությունները:

Համաշխարհային շուկայի մրցունակության բարձրացման հիմնական գործոնները:

Միջազգային առևտրի ժամանակակից կենտրոնների միջև առևտրական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները:

Գնագոյացումը միջազգային առևտրում: Գնագոյացման գործոնների համակարգ: Արտաքին առևտրի գների հիմնական տեսակները: Գների դինամիկան համաշխարհային շուկայում:

Թեմա 7. Արտաքին առևտրի պետական և միջազգային կարգավորումը

Արտաքին առևտրի քաղաքականության ելությունը: Ազատ առևտրի կամ բաց դռների քաղաքականությունը: Հովանավորչությունը (պրոտեկցիոնիզմը) և դրա դրսևորման ձևերը: Ազատ առևտրի և հովանավորչության քաղաքականությունների գույակցումը:

Մաքսատուրքը որպես արտաքին առևտրի սակագնային կարգավորման հիմնական գործիք: Սակագների գործառույթները: Մաքսատուրքերի դասակարգումը: Ներմուծման քվոտան որպես սակագնային կարգավորման միջոց:

Արտաքին առևտրի ոչ սակագնային սահմանափակումների էությունը և դրանց դասակարգումը: Արտաքին առևտրի քանակական սահմանափակումները (քվոտավորում և լիցենզավորում): Զվտայի տեսակները: Էմբարգո (բեռնարգելք): Արտահանման «կամավոր» սահմանափակումները:

Արտաքին առևտրի կարգավորման ֆինանսական մեթոդները (սուբսիդավորում, վարկավորում և դեմպինգ):

Արտաքին առևտրի կարգավորման ոչ տնտեսական մեթոդները: Միջազգային առևտրի բազմակողմ կարգավորում: Առևտրի և սակագների գլխավոր համաձայնագիրը (GATT): Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ): Համաշխարհային Մաքսային կազմակերպությունը (ՀՄԿ): Մաքսային միություն:

Թեմա 8. ՀՀ արտաքին առևտուրը

ՀՀ արտաքին առևտրային ռեժիմը: ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, դինամիկան և աշխարհագրությունը:

ՀՀ արտաքին առևտրի պետական կարգավորումը: ՀՀ-ն և Առևտրի համաշխարհային կազմակերպությունը:

ՀՀ արտաքին առևտուրը հարևան երկրների հետ: Արտահանման խրախուսման հիմնական ուղիները ՀՀ-ում: Ներմուծման փոխարինման քաղաքականության հիմնական օրինաչափությունները ՀՀ-ում: ՀՀ արտահանման և ներմուծման միջև հարաբերակցության բարելավումը:

Թեմա 9. Ազատ տնտեսական գոտիները

Ազատ տնտեսական գոտիների էությունը և ձևավորման նպատակները: «Ազատ տնտեսական գոտիներ» հասկացության մեկնաբանությունները: ԱՏԳ-երի բնորոշ գծերը: ԱՏԳ-ի գործունեության պայմանները և դրանցում գործող արտոնությունները:

Ազատ տնտեսական գոտիների տեսակները: Առևտրային (ազատ մաքսային գոտիներ, բոնդային պահեստներ, ազատ նավահանգիստներ, առևտրա արտադրական գոտիներ), արդյունաբերա-արտադրողական (ներմուծմանը փոխարինող, արտահանման կողմնորոշում ունեցող գոտիներ, արդյունաբերական պարկեր, գիտաարտադրական պարկեր), տեխնիկո-ներդրողական (տեխնոպոլիսներ, տեխնոպարկեր, նորարարական կենտրոններ), սերվիսային (օֆշորային, բանկային և ապահովագրական, զբոսաշրջության ծառայությունների) գոտիներ: Համալիր և միջազգային ազատ տնտեսական գոտիներ:

Ազատ տնտեսական գոտիների ձևավորման համաշխարհային փորձը:

Ազատ տնտեսական գոտիների ձևավորման հնարավորությունները ՀՀ-ում:

Թեմա 10. Ծառայությունների միջազգային առևտուրը

«Ծառայությունների միջազգային առևտուր» հասկացությունը: Միջազգային ծառայությունների առևտրի առանձնահատկությունները: Ծառայությունների դասակարգումը: Բիզնեսի հետ կապված միջազգային ծառայությունները (ֆինանսական, ապահովագրական, տեղեկատվական, գովազդային և այլն):

Ծառայությունների միջազգային առևտրի կարգավորման խնդիրները:
Տրանսպորտային ծառայությունների դերն ու նշանակությունը ծառայությունների համաշխարհային շուկայում: Ապրանքների մատակարարման բազիսային պայմանները (Incoterms):

Միջազգային վարձակալական գործառնությունների էությունը: Միջազգային վարձակալության ձևերը. լիզինգ, հայրինգ, չարտեր:

Չբոսաշրջության դերը ՄՏՀ-ի համակարգում: Համաշխարհային զբոսաշրջային շուկայի զարգացման միտումներն ու առանձնահատկությունները: Չբոսաշրջության դերը առանձին երկրների տնտեսության մեջ: Հայաստանի միջազգային (ներգնա և արտագնա) զբոսաշրջությունը և դրա զարգացումը:

Ֆինանսական ծառայություններ: Հայաստանի ֆինանսական ծառայությունների շուկայի առանձնահատկությունները:

SS ծառայությունների միջազգային շուկա:

Գիտատեխնիկական ծառայությունների համաշխարհային շուկայի էությունը: Գիտատեխնիկական ծառայությունների տեսակները: «Ինժեներինգ» հասկացության էությունը: Ինժեներինգային ծառայությունների միջազգային շուկան: Ինժեներինգային ծառայությունների մատուցման միջազգային պայմանագրերի տեսակները: Ինժինիրինգային ծառայությունների վճարման կարգը: Ինժինիրինգային ծառայությունների միջազգային փոխանակության կազմակերպումը: Մասնագիտացված ինժինիրինգային ֆիրմաները: Ռեինժինիրինգ:

Ծառայությունների միջազգային առևտրի դինամիկան և կառուցվածքը: Ծառայությունների առևտրի միջազգային կարգավորումը:

Թեմա 11. Միջազգային վարձակալական ծառայությունները

Միջազգային վարձակալական գործառնությունների էությունը: Միջազգային վարձակալության ձևերը. լիզինգ, հայրինգ, չարտեր: Ֆինանսական լիզինգը և դրա իրականացման մեխանիզմը: Ընթացիկ լիզինգ: Միջազգային վարձակալության պայմանագրերի հիմնական պայմանները: Ֆինանսական լիզինգի պայմանագրի պայմանները: Մատակարարման կարգադիրը: Ընթացիկ լիզինգի պայմանագրի պայմանները: Միջազգային վարձակալական գործառնությունների առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում:

Միջազգային վարձակալական գործառնությունների կազմակերպման ձևերը: Մասնագիտացված լիզինգային ֆիրմաները: Վերազգային կորպորացիաների լիզինգային դուստր ընկերությունները: Վերազգային բանկերի լիզինգային ֆիրմաները: Արդյունաբերական, շինարարական և միջնորդ լիզինգային ֆիրմաները:

Թեմա 12. Միջազգային ապահովագրությունը

Ապահովագրության անհրաժեշտությունը, գործառնությունները, առանձնահատկությունները և դերը ժամանակակից ՄՏՀ համակարգում: Ապահովագրական հիմնադրամ: Միջազգային ապահովագրական տերմինները: Ապահովագրվող և ապահովագրող: Ապահովագրական պարզևատրում: Ապահովագիր: Ապահովագրության տիպերը:

Արտաքին տնտեսական գործունեության ապահովագրությունը: Տրանսպորտային ապահովագրություն: Ապահովագրության գործի կազմակերպման տիպերը և ձևերը տարբեր երկրներում: Ապահովագրական ընկերությունների առևտրային գործունեությունը:

Ապահովագրական շուկայի մասնակիցները: Գլոբալ և տարածաշրջանային ապահովագրական շուկաները:

Վերաապահովագրումը որպես ապահովագրական գործարքների ֆինանսական կայունության ամրապնդման մեթոդ: Վերաապահովագրման հիմնական տերմինների դասակարգումը: Համամասնական և ոչ համամասնական վերաապահովագրում:

Թեմա 13. Կապիտալի միջազգային շարժը

Կապիտալի՝ որպես արտադրության գործոնի, միջազգային միգրացիայի եռ-թյունը և նպաստող գործոնները: Կապիտալի արտահանումը և աշխատանքի միջազգային բաժանումը: Կապիտալի արտահանման շարժառիթները: Կապիտալի միջազգային միգրացիայի դասական, նորդասական և արդի մեկնաբանությունները:

Կապիտալի միջազգային միգրացիայի գործընթացներին երկրների մասնակցության ցուցանիշները: Կապիտալի միգրացիայի ձևերը և դրանց տնտեսական բնութագիրը: Պետական և մասնավոր կապիտալի միջազգային միգրացիան: Ձեռնարկատիրական կապիտալի միգրացիան: Օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) և դրանց տնտեսական գնահատականը: Օտարերկրյա պորտֆելային ներդրումները (ՕՊՆ) և դրանց տնտեսական գնահատականը: Փոխատվական կապիտալի միգրացիան: Միջազգային տնտեսական կազմակերպությունները և փոխատվական կապիտալի շարժի կարգավորումը:

Միջազգային ներդրումային դիրք: Միջազգային բանքինգ և կապիտալի շուկա:

Միջազգային վարկային հարաբերությունների ձևերն ու առանձնահատկությունները: Արտաքին պարտք:

Կապիտալի միջազգային շարժի պետական կարգավորումը: Արտահանող և ներմուծող երկրների տնտեսության վրա կապիտալի միգրացիայի տնտեսական գնահատականը: Կապիտալի միջազգային միգրացիայի դրական ուղղվածության էվոյուցիան:

ՕՈՒՆ-երի ներգրավման անհրաժեշտությունը ՀՀ տնտեսության զարգացման և կառուցվածքային բարեփոխիսումների գործում: ՕՈՒՆ-երի ներգրավման միջավայրի գնահատումն ու բարելավման ուղիները: ՀՀ ՕՈՒՆ-ների կարգավորման իրավական դաշտը (ռեժիմը): ՕՈՒՆ-ների ներգրավման միջկառավարական համաձայնագրերը: ՀՀ-ում ՕՈՒՆ-ների ճյուղային կառուցվածքը, դրանց իրացման արդյունավետությունը, վերահսկողությունը և ներտարածաշրջանային տեղաբաշխումը: Ենթակառուցվածքային ոլորտի զարգացումը որպես ՕՈՒՆ-ների ներգրավման գործոն:

ՀՀ մասնակցությունը կապիտալի միջազգային շարժի գործընթացներին: ՀՀ արտաքին պարտք:

Թեմա 14. Վերազգային կորպորացիաները որպես միջազգային տնտեսական հարաբերությունների սուբյեկտ

Վերազգային կորպորացիաների (ՎԱԿ) ձևերը, բնորոշ գծերը և զարգացման միտումները:

ՎԱԿ-երի էությունը: ՎԱԿ-երը որպես ՄՏՀ-ի սուբյեկտ: ՎԱԿ-երի առաջացման պատճառները և բնորոշ գծերը: ՎԱԿ-երի մասնաճյուղերը, դուստր և ասոցացված ընկերությունները: Ֆինանսաարդյունաբերական խմբերը համաշխարհային տնտեսության համակարգում: ՎԱԿ-երի զարգացման փուլերը: ՎԱԿ-երի գործունեության ընդլայնմանը նպաստող գործոնները:

ՎԱԿ-երի գործունեության ժամանակակից առանձնահատկությունները: ՎԱԿ-երի տեխնիկական քաղաքականությունը: ՎԱԿ-երի դրական և բացասական կողմերը: Տրանսֆերտային (ներֆիրմային) գներ:

ՎԱԿ-երը և գլոբալացման ժամանակակից փուլի առանձնահատկությունները: ՎԱԿ-երի գործունեության առանձնահատկությունները զարգացող երկրներում: ՎԱԿ-երի գործունեությունը և դրանց զարգացման հեռանկարները ՀՀ-ում:

Թեմա 15. Աշխատուժի միջազգային միգրացիա

Աշխատուժի միջազգային միգրացիան որպես միջազգային տնտեսական հարաբերությունների ձև: Աշխատուժի միգրացիայի եուլթյունը, շարժառիթները, ձևերը, մասշտաբները և հիմնական ուղղությունները: Աշխատուժի միջազգային շուկան որպես համաշխարհային շուկայի բաղկացուցիչ մաս: Աշխատուժի ձգողության համաշխարհային կենտրոնները:

Աշխատուժի միջազգային միգրացիայի դրական և բացասական հետևանքները դոնոր և ռեցիպիենտ երկրների տնտեսությունների վրա: Աշխատուժի միջազգային միգրացիայի ժողովրդագրական, ազգային և կրոնական հետևանքները: Աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը երկրի վճարային հաշվեկշռի վրա: Բարձր որակավորում ունեցող աշխատուժի միջազգային միգրացիայի («ուղեղների արտահոսք») սոցիալ-տնտեսական հետևանքները:

Աշխատուժի միջազգային միգրացիայի պետական, տարածաշրջանային և միջազգային կարգավորումը: Ռեեմիգրացիայի պետական խթանումը: Աշխատուժի միջազգային միգրացիայի արդի միտումները: Աշխատուժի միջազգային միգրացիայի տեսությունները:

ՀՀ մասնակցությունն աշխատուժի միջազգային միգրացիայի գործընթացներին:

ՀՀ-ում աշխատուժի միգրացիայի կարգավորումը որպես սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման միջոց:

Թեմա 16. Տեխնոլոգիաների միջազգային շարժ

Տեխնոլոգիական գիտելիքների միջազգային փոխանակության եուլթյունն ու ձևերը: Գիտատեխնիկական գիտելիքների միջազգային առևտրի առանձնահատկությունները արդի պայմաններում: Տեխնոլոգիայի միջազգային փոխանցումները: Տեխնոլոգիաների դասակարգումը: Տեխնիկական առաջընթացի ձևերը: Տեխնիկական առաջընթացի ազդեցությունը միջազգային առևտրի վրա: Տեխնոլոգիական առաջադիմության Ջ. Հիքսի մոդելը:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանակության մեխանիզմը: Տեխնոլոգիաների փոխանցման ձևերը: Միջազգային արտոնագրային գործառնությունները: Արտոնագրային համաձայնագրերի ձևերը: Արտոնագրերի միջազգային առևտրի աճի գործոնները: Միջազգային արտոնագրային վճարումներ: Արտոնագրերի համաշխարհային շուկան: Արտոնագրերի միջազգային առևտուրը և դրա առանձնահատկությունները:

Նոր տեխնոլոգիաներ արտահանող և ներմուծող առաջատար երկրները: ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաների զարգացմանը նպաստող գործոնները:

Միջազգային տեխնիկական աջակցություն: Միջազգային տեխնիկական աջակցության ծրագրերը: Տեխնոլոգիական գրանտներ, տեխնիկական աջակցության համաֆինանսավորում, երկկողմանի և բազմակողմ տեխնիկական աջակցություն: Տեխնոլոգիաների միջազգային փոխանցումների միջպետական կարգավորումը:

Թեմա 17. Միջազգային տնտեսական ինտեգրում

Միջազգային տնտեսական ինտեգրման եռթյունը և նախադրյալները: Գլոբալ և տարածաշրջանային տնտեսական ինտեգրում: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման փուլերը:

Չարգացած տարածաշրջանների ինտեգրացիոն խմբավորումները: Եվրամիությունը որպես տարածաշրջանային ինտեգրման դասական օրինակ: ԵՄ ինստիտուցիոնալ կառուցվածքը և որոշումների ընդունման մեխանիզմները: Բազային պայմանագրեր: Եվրոպական միասնական տնտեսական տարածք: Տնտեսական և արժուրային միություն:

Եվրոպական տնտեսական համագործակցության զարգացման և ընդլայնման փուլերը: Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների անդամակցությունը Եվրամիությանը:

Հյուսիս-ամերիկյան ազատ առևտրի համաձայնագրի (NAFTA) ձևավորման սոցիալ-տնտեսական նախադրյալները:

Չարգացող երկրների տնտեսական ինտեգրացիան և դրանց առանձնահատկությունները (Լատինամերիկյան ազատ առևտրի ասոցիացիա (LAFTA), հարավ-արևելյան Ասիայի երկրների ասոցիացիան (ASEAN), Աֆրիկյան երկրների տնտեսական ինտեգրում): Ինտեգրումը Հարավային Ամերիկայում. MERCOSUR, ANCOM և այլն: Ինտեգրման գործընթացները Ասիայում և Խաղաղ օվկիանոսի երկրների միջև:

Հայաստանի Հանրապետությունը միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներում: Սևծովյան տնտեսական համագործակցություն (ԱՃՏՀ): Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ):

Եվրասիական տնտեսական միության ձևավորման նպատակները և խնդիրները:

ՀՀ-ն որպես Եվրասիական տնտեսական միության անդամ:

Թեմա 18. Համաշխարհային տնտեսության գլոբալացումը

«Համաշխարհային տնտեսության գլոբալացում» հասկացությունը: Գլոբալացման ընդհանուր բնութագիրը: Գլոբալացման նախադրյալները: Գլոբալացման բնորոշ գծերը: ՎԱԿ-երի ազդեցությունը գլոբալացման գործընթացների վրա: Պետության դերը գլոբալացման գործընթացներում: Գլոբալացման առավելությունները և թերությունները: Տնտեսության գլոբալացման գործընթացի հակասությունները: Գլոբալացման վերաբերյալ տեսությունները:

Գլոբալացման հետ կապված ժամանակակից հիմնախնդիրները: Տնտեսական ինքնավարություն և գլոբալացում: ՀՀ-ն գլոբալացման գործընթացներում:

Բաժին 2. Միջազգային ֆինանսներ

Թեմա 1. Միջազգային ֆինանսների հիմունքներ

Միջազգային ֆինանսները որպես տնտեսական հարաբերություններ: Միջազգային ֆինանսական համակարգի սուբյեկտները և տարրերը: Միջազգային ֆինանսական հարաբերությունների կառուցվածքը և տեսակները:

Թեմա 2. Գլոբալացումը և միջազգային ֆինանսական ճգնաժամերը

Ֆինանսական գործալացումը 20-րդ դարի կեսերից մինչև 21-րդ դարի սկիզբ: Ճգնաժամերի տեսակները միջազգային ֆինանսներում: Համաշխարհային արժույթային ճգնաժամ, պարտքային ճգնաժամ, ճգնաժամ ֆինանսական շուկաներում (արժույթային, ֆոնդային, վարկային), ֆոնդային բորսայի ճգնաժամ, վճարային հաշվեկշռի ճգնաժամ: Միջազգային ճգնաժամերի պատճառները և հետևանքները:

Թեմա 3. Միջազգային ֆինանսական համակարգը և դրա տարրերը

Միջազգային ֆինանսական շուկաների տեսակները. արժույթային, փողային, վարկային, ֆոնդային, ոսկու՝ որպես ֆինանսական ակտիվ, ածանցյալ ֆինանսական գործիքներ, ապահովագրություն:

Միջազգային ֆինանսական տեղեկատվությունը, որպես ֆինանսական ցուցանիշների, փաստաթղթերի, ստանդարտների ամբողջություն, որոնք հաստատում են որոշումների կայացումը և ֆինանսական գործարքների իրականացման կանոնները: Միջազգային վարկանիշային գործակալություններ:

Միջազգային վճարային համակարգեր:

Կենտրոնական բանկերի դերը միջազգային ֆինանսական կարգավորման գործում:

Ֆինանսական շուկայի անդրազգային ինստիտուտները, որպես տարբեր երկրների շուկաներում գործող միջազգային խմբեր:

Գլոբալ համակարգային նշանակություն ունեցող ինստիտուտներ: Անդրազգային բանկեր:

Օֆշորային գոտիները որպես իրավասություններ, որոնք իրականացնում են ոչ ռեզիդենտների հետ գործարքներ՝ դրանց գործունեության հարկային օպտիմալացման նպատակով:

Թեմա 4. Միջազգային կորպորատիվ ֆինանսներ

Վերազգային ընկերությունների ֆինանսական ռեսուրսները: Վերազգային ընկերությունների ներդրումային ռեսուրսների կառավարում: Ռիսկերի ապահովագրությունը վերազգային ընկերություններում: Միջազգային ֆինանսական կառավարում: Հարկային վարչարարություն և տրանսֆերտային գնագոյացում վերազգային ընկերություններում:

Բաժին 3. Միջազգային արժույթավարկային հարաբերություններ

Թեմա 1. Միջազգային արժույթային հարաբերություններ

Միջազգային արժույթային հարաբերությունների էությունը և դրանց դերը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Ազգային արժույթային համակարգը և դրա տարրերը: Համաշխարհային արժույթային համակարգը և դրա տարրերը:

Արժույթային համակարգի տարրերի տնտեսագիտական մեկնաբանությունները և դրանց փոխազդեցությունը:

Արժույթային համակարգի տարրերի հարաբերակցության ժամանակակից միտումները: Ոսկու դերը արժույթային հարաբերություններում:

Արժույթը և դրա տեսակները, պահուստային արժույթներ, հատուկ փոխառն-լիության իրավունք (SDR), ազատ, մասնակի և չփոխարկվող արժույթներ: Արժույթային փոխարժեքը, դրա տեսակները: Արժույթային գնանշում:

Թվային արժույթային համակարգը և դրա առանձնահատկությունները: Վիրտուալ արժույթային սխեմաներ: Կրիպտոարժույթի՝ որպես ժամանակակից ակտիվի ստեղծման նախադրյալներն ու զարգացման առանձնահատկությունները: Բիթքոինի կիրառման հետ կապված ռիսկերը: Կրիպտոարժույթով գործարքների իրականացման մեխանիզմը: Կրիպտոարժույթների հիմնական տեսակներն ու դրանց շրջանառությունը համաշխարհային տնտեսությունում: Կրիպտոարժույթների կապիտալացումը: Կրիպտոարժույթների կիրառման իրավա-օրենսդրական կարգավորման հիմքերը Հայաստանի Հանրապետությունում:

Թեմա 2. Համաշխարհային արժույթային համակարգի Էվոյուցիան

Համաշխարհային արժույթային համակարգի Էվոյուցիան: Ոսկու ստանդարտը: Ոսկե-դեվիդային ստանդարտը: Բրեթթոն-Վոլդսյան արժույթային համակարգի բնորոշ գծերը: Յամայկայի արժույթային համակարգը:

Եվրոպական արժույթային համակարգի ձևավորման նախադրյալները: Եվրոպական արժույթային համակարգի զարգացման փուլերը: «Եվրոպական արժույթային օձ» հասկացությունը: Եվրոպական արժույթային միավորի ձևավորումը: Արժույթային համագործակցության Եվրոպական ֆոնդը: Եվրոպական արժույթային միության ձևավորման սկզբունքները: Միասնական Եվրոպական արժույթի (Euro) ընդունման մեխանիզմը: Եվրոյի դերը միջազգային արժույթավարկային հարաբերություններում:

Թեմա 3. Ոսկին միջազգային տնտեսական համակարգում

Ոսկու տեղը և դերը միջազգային արժույթային հարաբերություններում, զարգացման փուլերը: Համաշխարհային փողի ֆունկցիոնալ ձևերի զարգացումը: Ոսկին որպես իրական պահուստային ակտիվ և երաշխիքային հիմնադրամ:

Պետությունների միջև ոսկու պաշտոնական պաշարների բաշխում:

Միջազգային արժույթային իրացվելիություն: Միջազգային արժույթային իրացվելիություն հասկացությունը, կառուցվածքը, ձևերը և գործառույթները: Եվրոյի ազդեցությունը ոսկու և արտարժույթի պահուստների կառուցվածքի վրա: Միջազգային իրացվելիության ցուցանիշները, դրա կարգավորման մեթոդները:

Թեմա 4. Արժույթի փոխարժեքի և դրա գործնական կիրառությունը

Արժույթի փոխարժեքի հաշվարկման ձևերը: Արժույթային փոխարժեքի տեսակները ըստ ճկունության աստիճանի: Ֆիքսված արժույթային փոխարժեքի սահմանափակ լողացող և լողացող արժույթային փոխարժեքի ռեժիմները: Անվանական և իրական արժույթի փոխարժեքը, արժույթի անվանական և իրական արդյունավետ փոխարժեքը և դրանց փոխկապվածությունը: Արժույթի փոխարժեքի հիբրիդային ձևերը:

Արժույթային փոխարժեքի վրա ազդող գործոնները: Արժույթի փոխարժեքի վրա ազդող կարճաժամկետ և երկարաժամկետ գործոններ: Արժույթի փոխարժեքի ազդեցությունը ներքին գների մակարդակի, վճարային հաշվեկշռի, պետական բյուջեի, դրամական համակարգի և տնտեսության իրական հատվածի վրա:

Փոխարժեքներ և տոկոսադրույքներ. Փող, տոկոսադրույքներ և փոխարժեքներ: Գների մակարդակը և փոխարժեքը երկարաժամկետ հատվածում: Ապրանքների արտադրությունը և փոխարժեքը կարճաժամկետ հատվածում:

Ընդհանուր հավասարակշռության տեսություն: Գնողունակության պարիտետի տեսություն: Տոկոսադրույքների ազդեցության տեսություն: Ֆիշերի

Էֆեկտ: Դրամական տեսություն: Արժույթի փոխարժեքի ընդհանուր տեսություն: Արժույթի փոխարժեքի հիպերոռեակցիան:

Թեմա 5. Արժույթային գործառնություններ

Արժույթային գործարքների գաղափարը: Արժույթային գործարքների դասակարգման սկզբունքները: Արժույթային գործարքի կնքման կարգը: Արժույթային դիրք: Կարճ և երկար արժույթային դիրքի գաղափարը: Կանխիկ գործարքներ: Արտարժույթային գործարքներ անհապաղ մատուցմամբ («սփոթ»):

Շտապ գործարքներ արտարժույթով: Ֆորվարդային գործարքների նպատակները: Ֆորվարդային գործարքների առանձնահատկությունները և դրանց տեսակները: Պրեմիում և դիկոնտո հասկացությունները, դրանց հաշվարկման բանաձևը: Արժույթի շուկայում ֆորվարդային փոխարժեքների և տոկոսադրույքների փոխհարաբերությունները: Պրեմիումի և դիկոնտոի տարեկան տոկոսադրույքների վերահաշվարկի բանաձևը:

Ֆյուչերսային գործարքներ: Ֆորվարդային և ֆյուչերսային գործարքների միջև նմանություններն և տարբերությունները: Ֆյուչերսների շուկա:

Օպցիոն գործարքներ: Դրանց դասակարգումը:

Սվոփ գործարքներ, նպատակները, Էությունը և նշանակությունը: Սվոփ գործարքների տեսակները: Արժույթի և տոկոսադրույքների սվոփ: Սվոփի շուկա:

Արժույթային քլիրինգ հասկացությունը: Առաջացման պատճառները, նպատակները և զարգացումը: Արժույթային քլիրինգի ձևերը:

Արժույթային քլիրինգի դերը արտաքին առևտրում: Զլիրինգային հաշվեկշռի կարգավորում:

Եվրոպական արժույթային համաձայնագիր: Եվրոպական վճարային միություն: Արժույթային քլիրինգի առանձնահատկությունները տարբեր երկրներում: Զլիրինգի կարգավորման առանձնահատկությունները միջազգային կազմակերպությունների կողմից:

Թեմա 6. Միջազգային արժույթային շուկաներ

Միջազգային արժույթային շուկաների մասնակիցները: Միջազգային արժույթային շուկաների գործառնությունները: Արժույթային շուկաների տեսակները: Միջազգային ֆինանսական հոսքեր և համաշխարհային ֆինանսական կենտրոններ, եվրոշուկան: Արժույթային գործառնությունները: Արժույթի առաջարկն ու պահանջարկը: Դևալվացիայի և ռևալվացիայի ազդեցությունը արժույթային շուկայի վրա: Մարշալ-Լերների պայմանը: Ջեյ կորը: Միջազգային արժույթային իրացվելիությունը և դրա ցուցանիշները:

Թեմա 7. Արժույթային քաղաքականություն

Միջազգային արժույթային հարաբերությունների կարգավորումը և արժույթային քաղաքականությունը: Արժույթային քաղաքականության ձևերը և մեթոդները: Արժույթային քաղաքականության օգտագործումը մակրոտնտեսական կայունացման ծրագրերում: Արժույթի փոխարժեք և տնտեսական քաղաքականություն: Արժույթային քաղաքականության առանձնահատկությունները զարգացած և զարգացող (այդ թվում՝ ՀՀ-ում) երկրներում:

Արժույթային սահմանափակումները որպես կառավարության արժույթային քաղաքականության մաս, Էությունը և ձևերը: Արժույթային սահմանափակումների հիմնական առանձնահատկությունները: Արժույթային խտրականություն և

արժութային շրջափակում: Արգելափակված հաշիվների և արգելափակված արժույթի գաղափարը:

Ընթացիկ գործարքների և կապիտալի հոսքերի արժութային սահմանափակումները: Պասիվ և ակտիվ վճարային հաշվեկշռի նկատմամբ կիրառվող արժութային սահմանափակումների ձևերը:

Արժութային սահմանափակումների զարգացումը և դրանց հետևանքները: ԱՄՅ-ի միջոցով արժութային սահմանափակումների միջպետական կարգավորումը: Արժութային հովանավորչություն, արժութային սահմանափակումների ազատականացման գործընթացի անհամաչափություն:

Երկրների արտարժութային սահմանափակումները՝ կապված կապիտալի հոսքի գործառնությունների հետ (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա, Ճապոնիա և այլ երկրներ): ԵՄ երկրներում արժութային սահմանափակումների զարգացումը: Արտարժույթի սահմանափակումները զարգացող երկրներում, դրանց նպատակները և սոցիալ-տնտեսական բովանդակությունը:

Թեմա 8. Վճարային հաշվեկշռի կազմման և կարգավորման առանձնահատկությունները

Վճարային հաշվեկշռը որպես երկրի արտաքին տնտեսական կապերի արտացոլում: Վճարային հաշվեկշռի կազմման առանձնահատկությունները: Վճարային հաշվեկշռի հողվածների դասակարգումը: Վճարային հաշվեկշռի վրա ազդող գործոնները: Վճարային հաշվեկշռի կարգավորման հիմնական մեթոդները և գործիքները: Վճարային հաշվեկշռի անհամամասնությունների պատճառներն ու դրանց գնահատականը: Վճարային հաշվեկշռի մակրոտնտեսական կարգավորումը: Վճարային հաշվեկշռի կարգավորման տեսությունները:

Երկրների տարբեր խմբերի՝ շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրների, զարգացող երկրների և անցումային տնտեսություն ունեցող երկրների վճարային հաշվեկշռի կազմման և կարգավորման հիմնական առանձնահատկությունները:

ՀՀ վճարային հաշվեկշռը:

Թեմա 9. Միջազգային հաշվարկները

«Միջազգային հաշվարկներ» հասկացությունը: Միջազգային հաշվարկներում ազգային պահուստային արժույթի, միջազգային հաշվարկային միավորների և ոսկու դերը:

Միջազգային հաշվարկների ձևերը: Հաշվարկների ակրեդիտիվային ձևը և դրա տարատեսակները: Ինկասո: Բանկային փոխանցում: Հաշվարկներ կանխավճարով և բաց հաշվով: Երաշխիքներ: Ֆակտորինգը որպես առևտրի ֆինանսավորման եղանակ: Ֆակտորինգի տեսակները:

Միջազգային հաշվարկների դերը արտաքին տնտեսական գործարքների կազմակերպման գործում: Արտաքին տնտեսական գործարքների արժույթա-ֆինանսական և վճարային պայմանները:

Թեմա 10. Միջազգային վարկային հարաբերություններ

Միջազգային վարկը որպես կապիտալի շարժի ձև: Միջազգային վարկի ձևերը, տեսակները և իրացման մեխանիզմները: Արժութային վարկ և դրա տեսակները: Միջազգային վարկավորման սկզբունքները: Միջազգային վարկերի տոկոսադրույքների սահմանումը: Միջազգային վարկավորման միջոցները: Միջազգային վարկ և արտաքին պարտք: Փարիզյան և Լոնդոնյան ակումբներ:

Թեմա 11. Միջազգային արժույթային և վարկային ռիսկ

Արժույթային ռիսկ և դրա տեսակները: Արժույթային ռիսկերի առաջացման պատճառները: Արժույթային ռիսկերը նվազեցման մեթոդներն ու եղանակները: Պաշտպանական դրույթներ: Միակողմանի և երկկողմ վերապահումներ: Ոսկյա վերապահումը, դրա չեղարկման պատճառները: Արժույթային և բազմարժույթային վերապահումները, դրանց ձևերը և կիրառման առանձնահատկությունները: Միջազգային հաշվարկային միավորի (SDR) օգտագործումը բազմարժույթային վերապահումներում:

Արժույթային ռիսկի գնահատումն ու կառավարումը: Արժույթային արբիտրաժ: Ժամկետային արժույթային գործառնությունները որպես արժույթային ռիսկի ապահովագրման ձև: Արժույթային ռիսկի կառավարման այլ ձևեր: Արժույթային ռիսկի կարգավորման և ապահովագրության մեթոդները: Ֆորվարդ, օպցիոն և սվոփ գործարքների կիրառում՝ արտարժույթային ռիսկերի հեջավորման համար:

Ռիսկերի կառավարման գործիքներ և մեթոդներ:

Միջազգային վարկային ռիսկ և դրա տեսակները: Միջազգային վարկային ռիսկի գնահատումն ու կառավարումը:

Թեմա 12. Միջազգային տնտեսական և ֆինանսական կազմակերպություններ

Միջազգայի տնտեսական և ֆինանսական կազմակերպությունների դերը համաշխարհային տնտեսությունում:

ՄԱԿ-ի տնտեսական կառույցները: Առևտրի համաշխարհային կազմակերպություն և UNCTAD: Աշխատանքային միջազգային կազմակերպություն և Միգրացիայի միջազգային կազմակերպություն: Համաշխարհային բանկի խումբ: Արժույթի միջազգային հիմնադրամ: Միջազգային հաշվարկների բանկ: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ: Եվրոպական կենտրոնական բանկ: Տարածաշրջանային զարգացման բանկեր:

Ոչ ֆորմալ ինստիտուտներ. կառավարությունների ղեկավարների ժողովներ:

Միջազգային արժույթավարկային հարաբերությունների բազմակողմ կարգավորման մեխանիզմները: Համաշխարհային ֆինանսական համակարգի կարգավորման ժամանակակից միտումները: Միջազգային արժույթավարկային հարաբերություններում միջազգային ֆինանսական կազմակերպությունների մասնակցության ժամանակակից միտումները: Միջազգային արժույթավարկային հարաբերություններում տարածաշրջանային ֆինանսավարկային կազմակերպությունների մասնակցության ժամանակակից միտումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Մարկոսյան, Գ.Նազարյան, Դ.Հախվերդյան, «Միջազգային տնտեսական հարաբերություններ», Ուսումնական ձեռնարկ, ԵՊՃՇՀ, Երևան 2012, մաս I, 640 էջ:

2. Ա.Մարկոսյան, Գ.Նազարյան, Դ.Հախվերդյան, «Միջազգային տնտեսական հարաբերություններ», Ուսումնական ձեռնարկ, ԵՊՃՀՀ, Երևան 2012, մաս II, 640 էջ:
3. Ա.Մարկոսյան, Դ.Հախվերդյան, Գ.Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Երևան, «ԱՌՏ» 2002:
4. Գ. Նազարյան, Արտաքին տնտեսական գործունեության տրանսպորտային ապահովում, Ուսումնական ձեռնարկ, Եր., Տնտեսագետ 2010, 456 էջ:
5. Գ.Նազարյան, Դ.Հախվերդյան, Առևտրի միջազգային կոնվենցիաներն ու համաձայնագրերը, Դասախոսությունների տեքստ, Եր., Նահապետ 2011, 176 էջ:
6. Դ. Գալոյան, Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ասպեկտները // Հեղինակային հրատարակություն, Երևան 2014, 294 էջ:
7. Զ. Թադևոսյան, Կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիա, «Տնտեսագետ», Երևան 2005:
8. Զ. Թադևոսյան, Կապիտալի միջազգային միգրացիա, (դասախոսությունների տեքստ), Տնտեսագետ Երևան 2003:
9. Զ. Թադևոսյան, Դ. Գալոյան, Միջազգային տնտեսական ինտեգրացիա, (հեղինակային հրատարակություն), Երևան 2006:
10. Զ.Թադևոսյան, Դ.Գալոյան, Միջազգային տնտեսագիտություն. տեսություն և քաղաքականություն // Ուսումնական ձեռնարկ, Հեղինակային հրատարակություն, Երևան 2015, 448 էջ:
- 11.Թ.Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009թ.
- 12.Մ.Թավադյան, Գ.Նազարյան, Վճարային հաշվեկշռի կարգավորման հիմնախնդիրները, Երևան, «Տնտեսագետ», 2006թ.
- 13.Միջազգային տնտեսական հարաբերություններ, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ» 2008:
- 14.Ստիվեն Հասստեդ Մայքլ Միլվին, «Միջազգային տնտեսագիտություն Միջազգային առևտուր», հատոր 2-րդ, Երևան 2001թ.
15. А.Кириев, Международные экономика: В двух частях, Москва, 1998 и 1999г.
16. Антонов В.А., Международные валютно-кредитные и финансовые отношения, М.: Юрайт. 2016.-560с.
17. Доменик Сальваторе, Международная экономика, Учебник, Москва, 1993г.
18. Е.Ф.Авдокушин, Международные финансовые отношения (основы финансовики). М.: Дашков и Ко 2012.-132с.
19. Е.Ф.Авдокушин, Международные экономические отношения, Учебник, Москва, Юристъ, 2003.-320с.
20. Международные валютно-кредитные отношения, Учебник и практикум. Под ред. А.И. Евдокимова, И.А.Макцимцева, С.И. Рекорд. -М.: Юрайт. 2016.-335с.
21. Международные экономические отношения, Учебник, Под редакцией А.И. Евдокимова, Москва, Проспект, 2004г.
22. Международные экономические отношения, Учебник, Под редакцией Б.М. Смитиенко, Москва, ИНФРА-М, 2007г.

23. Международные экономические отношения, Учебник, Под редакцией И.П. Фоминского, Экономистъ, 2004г.
24. Международные экономические отношения, Учебник, Под редакцией Н.Н. Ливенцева, Москва, Проспект, 2005г.
25. Международные экономические отношения, Учебник. Под общей редакцией профессора В.Е.Рыбалкина, Москва, 2007 г.
26. Мировая экономика и международные экономические отношения. Полный курс. Под ред. А.С.Булатова. М.: КНОРУС 2017.-916с.
27. Мировая экономика и международный бизнес, Учебник, Под редакцией В.В. Полякова и Р.К. Шенина, Москва, КНОРУС, 2007г.
28. Мировая Экономика, Учебник, Под редакцией А.С.Булатова, Москва, Юристъ, 2005г.
29. С.В.Фомишин, Международные экономические отношения, Ростов-на-Дону, Феникс, 2006г.
30. Чеботарев Н.Ф., Мировая экономика и международные экономические отношения, М.: Дашков и Ко 2016.-352с.
31. Шимко П.Д., Мировая экономика и международные экономические отношения. Учебник и практикум. М.: Юрайт. 2015.-392с.
32. Robert J. Carbaugh, International Economics, 10th edition, 2005, by South-Western, part of the Thomson Corporation. South Western, Thomson, and the Thomson logo are trademarks used herein under license.
33. Bhagwati. N., Export Promoting Trade Strategy: Issues and Evidence. WB Research Observer, Vol.3, No.1, 1988
34. Bowen H. P., Learner E. E. and Sveikayshas L., "Multicountry, Multifactor Tests of the Factor Abundance
35. D. Salvatore International Economics, Wiley; 11 edition 2013.
36. Dornbush R., Fisher S. and Samuelson P., "Comparative Advantage: Trade and Payments in a Ricardian Model with
37. Gerber James, "International Economics", Mass: Addison-Wesley, New York 1999,
38. Greenwald G. Keynesian, New Keynesian and New Classical Economics / G. Greenwald, J. Stiglitz // National Bureau of Economic Research Working Paper. 1987, N 2160.,
39. J. Gerber International Economics (6th Edition) (Pearson Economics) Prentice Hall; 6th Edition, 2013.
40. Krugman P.R. Competitiveness: a dangerous obsession. Foreign Affairs, 73(2), 28-44, 1994
41. Obstfeld M. Foundations of International Macroeconomics / M. Obstfeld, K. Rogoff. 4-th ed. Massachusetts: Massachusetts Institute of Technology, 1999,
42. P. R. Krugman and M. Obstfeld, International Economics: Theory and Policy (10th Edition) (Pearson Series in Economics), Prentice Hall; 10 edition 2014.
43. R. Carbaugh International Economics (Upper Level Economics Titles) 14th Edition, South-Western College Pub; 14th Edition, 2012.

44. Robert M. Dunn, Jr. George Washington University, John H. Mutti Grinnell College, International Economics, Sixth edition, First published 2004 by Routledge 11 New Fetter Lane, London EC4P 4EE, imultaneously published in the USA and Canada by Routledge, 29 West 35th Street, New York, NY 10001
45. T. Pugel, International Economics (Mcgraw-Hill Series in Economics), McGraw-Hill Education; 16th Edition, 2015

Մասնագիտացված պարբերականներ

46. Ամսագիր «Мировая экономика и международные отношения»

Միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայքեր

47. Առևտրի համաշխարհային կազմակերպություն – www.wto.org
48. ՄԱԿ-ի առևտրի և զարգացման խորհրդածոլով – www.unctad.org
49. Արժույթի միջազգային հիմնադրամ – www.imf.org
50. Համաշխարհային բանկ – www.worldbank.org
51. Միջազգային հաշվարկների բանկ – www.bis.org
52. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ – www.ebrd.org
53. Աշխատանքի միջազգային կազմակերպություն – www.ilo.org
54. Եվրոպական Միություն – <https://europa.eu/>
55. ԱՄՆ-Կանադա-Մեքսիկա համաձայնագիր – <https://usmca.com>
56. Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիա – <https://www.efta.int/>
57. Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիա – <https://asean.org/>
58. Եվրասիական տնտեսական հանձնաժողով – www.eurasiancommission.org